

#### IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

2009 թվականի ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՎՊԽ կողմից 2003թ. ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումների գործող տեղային ցանցը միավորել է տեխնիկական պահանջներին համապատասխանող 190 համակարգիչ, գործել է «ԷնԷսԷսԴ-ոմեյն» դոմեյնային միջավայր, որը կառավարվել է «Վիդոուս-2000» սերվերի միջոցով: Այն ապահովել է կենտրոնացված կառավարումով հուսալի միջավայր, ներառյալ հակավիրուսային պաշտպանությունը:

Տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով 2009թ.-ին այցելություններ են կատարվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ, որտեղ մասնավորապես կատարվել են հետևյալ աշխատանքները՝ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Արմավիրի, Սյունիքի, Կոտայքի, Տավուշի և Վայոց Ձորի մարզային գործակալություններում արդիականացվել են ծրագրային փաթեթները, թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, կարգավորվել են տեղային ցանցերը և մոդեմային կապը համապատասխան գործակալությունների տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Շարունակվել է վիճակագրական և վարչական տվյալների արխիվացումը: Համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կատարվել են ստուգումներ, ախտորոշումներ և սարքավորումների վերանորոգում:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող մարդահամարի վարչությունում տարվա ընթացքում 27 համակարգիչ միացվել են համակարգչային տեղային ցանցին և տեղակայվել անհրաժեշտ ծրագրային փաթեթներ և կենտրոնացված կառավարումով հակավիրուսային ծրագրեր:

2009 թվականի ընթացքում ՀՀ ԱՎԾ-ում շահագործվել են թվով 72 տվյալների բազաներ: Սոցիալական ոլորտի վիճակագրական տվյալների մշակման համար ստեղծվել է 1 նոր ծրագրա-տեխնոլոգիական համալիր, ինչպես նաև 39 տարբեր ոլորտների ծրագրա-տեխնոլոգիական համալիրներում կատարվել են 60 փոփոխություններ:

ՀՀ ԱՎԾ առանձնացված ստորաբաժանումներում շարունակվել են 15 ծրագրա-տեխնոլոգիական համալիրների և 68 կազմակերպություններում՝ 3-ի շահագործումը, տեղեկատվությունը մուտքագրվել է տեղերում և փոխանցվել ՀՀ ԱՎԾ մշակման և ամփոփման նպատակով:

Շարունակվել է դասակարգիչների տվյալների հիմնապաշարների վարումը և ընդլայնումը, դրանցում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ:

23 տվյալների բազաներում ՏԳՏԴ նոր խմբագրության (ՏԳՏԴ Rev.2) հետ կապված կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Ստեղծվել է Հայաստանի Հազարամյակի Չարգացման Նպատակների (ՀՉՆ) ցուցանիշների տվյալների բազա՝ հայերեն և անգլերեն տարբերակներով, DevInfo 6.0

տվյալների բազաների համակարգի օգտագործմամբ: Մուտքագրվել են 1999-2008թթ. ցուցանիշները:

Օգտագործելով Արք Վիյու 8 (ArcView 8) գրաֆիկական փաթեթը մշակվել են 22 քարտեզներ վիճակագրական հրապարակումներում գետեղելու նպատակով:

Շարունակվել են տվյալների բազան տեղեկատվությամբ լրացնող և ժամանակագրական շարքերի ստացումը ապահովող ծրագրերի մշակման-նախագծման աշխատանքները:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) հետ համատեղ ՀՀ ԱՎԾ աշխատակիցների համար կազմակերպվել է 2 սեմինար DevInfo ծրագրային փաթեթի՝ «ԴեվԻնֆո 6.0 Սպառող և տվյալների բազայի կառավարում» (Advanced Database Management and Web Enabling a Database) և «ԴեվԻնֆո 6.0 տվյալների բազայի կառավարում» (DevInfo Database Administration), ուսուցման նպատակով: